



# ԲԱԶՄԱՎԵՊ

ՈՅՖԶ. 1867 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՕԳՈՍՏՈՍ

## ՊՈՍԻՒԵ

ԻՐ ՎԵՅ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՃԱՌԵՐԸ

Թարգմանեալ ՚ի Հ. Արտեմ վ. Կոմիտաս Բագրատունոյ .

(Տես երես 11. 97.)

**Տ**օֆէնին դաստիարակութեան ժամանակը Պոսիւէ մեծ մասն ունեցաւ երկու դիպուածներու մէջ, որոնք իրենց համբաւն ստացած են արժանապէսեթէ լուզովիկոսի յօժարափոյթ համակամութեամբը և եթէ կրկին տիկնայց ճշմարիտ զղմամբն աշխարհիս գրդարանէն յանկարծակի չոր վանքի մը մէջ ամփոփուելովն ՚ի զարմացումն բովանդակ Գալլիոյ և օտարաց : Տիկինն լա Վալիէռ որ կրցեր էր գերել մեծ թագաւորին սիրով յաղիողորմ ցաւ Մարիամ թերեսիա դշխային, որ երեսէ ընկած վիճակի մէջ կը նուազէր, առ ոչինչ գրելով թագաւորին դէմ կենալը, պալատականաց ծաղրածութիւնքը, միայն իր խղճմուանքին խայթը դաղը.

յընելու համար թօժափեց վերջապէս երեսնամեայ հասակին մէջ (1674) արքունեաց վարդերն ու փափկութիւնները ու գնաց փակուեցաւ յորդորանզք Պոսիւէի՝ յարգելավանս կարմելական կուսանաց : Ապայիսարող տիկինը աղաչեր էր զՊոսիւէ որ իր սքեմարկէից քարոզն ինքը տայ . Պոսիւէ ստիպուած ըլլալով ան ատեն տօֆէնին ուղեկից ըլլալու որ Տօլ քաղաքին պաշարմանը գացեր էր, չկրցաւ լա Վալիէռի փափաքը կատարել . բայց ուխտադրութեան քարոզն ինքը տուաւ 1675ին յունիսի 26ին : Նոյն ինքն Մարիամ թերեսիա տարաւ առ ոտոս սեղանոյն իր նախանձորդը, որուն պատճառաւ թափեր էր իրեն առաջին արցունքները, և

մահապատիկ լաթը ձգեց վրան . թա-  
գուհւոյն մօտ կեցեր էր նաև լոնկվիլ  
զքսուհին որ Պարսաւորաց խոռովո-  
թեան ժամանակ մեծ անուն հանած էր ,  
և քսան տարուընէ ՚ի վեր կը բնակէր  
միայնիկ ՚ի լուղթեան և յառանձնու-  
թեան . լուղովիկոս ԺԴ անձամբ ներ-  
կայ չէր հանդիսին , բայց ամենուն միտ-  
քը իրեն վրան էր : Լա վալիէռ տիկի-  
նը կոչուեցաւ լուղովիկէ Ռդորմու-  
թեան (Soeur Louise de la Miséricorde)  
և երեսունըվեց տարի ապրեցաւ կար-  
մելականաց խատամբեր և ճգնողական  
վարուքը մինչև 1740ի յունիսին 6ը :

Յետ այնորիկ հարկ եղաւ Պոսիւէի  
որ համոզէ զլուղովիկոս խղելու իր ա-  
պօրինաւոր կապանքը Մոնդէսրան հը-  
րաշագեղ տիկնոջ հետ , ինչպէս կ'ըսէ  
Ոէվիննէ տիկինը , որ փոխանակ լա վա-  
լիէռի եղեր էր թագաւորին գրգանկք :  
1675ին տիկինն Մոնդէսրան աւազ  
հինգշարթի օրը վերսայեի քահանայի  
մը ուզեց խոստովանանք ըլլալ . քահա-  
նան հրաժարեցաւ արձակում տալէն .  
Մոնդէսրան բողոքեց թագաւորին որ  
կանչել տուաւ տեղւոյն ժողովրդապե-  
տը , բայց անիկայ ըսաւ որ քահանան  
իր պարտքն ըրեր էր : Թագաւորը ու-  
զեց խորհուրդ հարցնել Մոնդոզիէ  
զքսին և Պոսիւէի . Պոսիւէ ժողովրդա-  
պետին պատասխանը կրկնեց թէ քա-  
հանան իր պարտքն ըրեր էր . Մոն-  
դոզիէ ալ անանեկ ուժդին խօսեցաւ յի-  
շեցնելով իրեն և կրօնից փառքը , որ  
թագաւորն այլայլած ոտք եղաւ , ու  
Մոնդոզիէի ձեռքը սխմելով զուրցեց  
իրեն . «Ա՛լ Մոնդէսրանի երեսը պիտի  
չտեսնեմ» : Լուղովիկոս յետ Պոսիւէի  
հաստատ խօսք տալու որ այնուհետեւ  
Մոնդէսրանի հետ վերաբերութիւննե-  
րը բոլորովին պիտի կտրէր , յանձնեց  
իրեն որ պատրաստէ տիկինը վանք մը  
քաշուելու : Դժուարին գործ մ'եղաւ  
այս . որովհետեւ Մոնդէսրան աննման  
քաղցրաբարոյ և համակամեալ լա  
վալիէռին , գէմ կը դնէր Պոսիւէի  
խրատներուն իրեն գոռող և մեծամիտ  
կին մը որ տառը տարուընէ ՚ի վեր

վարժած էր բոլոր արքունիքը և լուղո-  
վիկոսը իրեն ոտքը խոնարհած տեսնա-  
լու . չինայեց Պոսիւէին ոչ յանդիմանու-  
թիւն , ոչ սպառնալիք , և տեսնալով որ  
այն զէնքերը չէին բաներ Պոսիւէի ան-  
դամանդեայ զրահուցը վրայ , ձեռք ա-  
ռաւ չողոմ և խոստմունք . բայց լեռնա-  
ձե կոհակներէ ծեծուած ժայռն և ոչ  
խիկ զգաց մեղմ ալիքներուն փայփա-  
յանքը : Պոսիւէ առ ժամանակ մը միայն  
կրցաւ վայելել իր յաղթութիւնը , ո-  
րովհետեւ թելազրանք չնթօղ պալա-  
տականներուն , Մոնդէսրան տիկինը  
դարձեալ մտաւ յարբունիս և արծար-  
եց թագաւորին սրտին մէջ կէս մա-  
րած ցանկութիւն մը . որուն վրայ Պո-  
սիւէ վշտացած՝ ձայնը քաշեց ու ինքն-  
իրեն կը հեծեծար : Մոնդէսրան տի-  
կինը վերջապէս իր ամբարտաւան գնա-  
ցից համար թագաւորին աչքէն ելլե-  
լով , առանձնացաւ մենաստան մը ու  
ան ատեն սկսաւ ճանչնալ Պոսիւէի ե-  
րախտիքը , որ երբեմն երբեմն յայց  
կուգար իրեն . վախճանեցաւ իր յան-  
ցանկները լալով 1707ին , վախտունը-  
վեց տարուան հասակին մէջ :

Տօֆէնին դաստիարակութիւնը լմբն-  
ցընելէն եսքը Պոսիւէ անուանեցաւ յե-  
պիսկոպոսութիւն Մօ քաղաքին , որ իր  
ներկայութեամբն ելաւ Գալլիոյ եկեղե-  
ցւոյն մայրաքաղաքը : Իրեն պէս ան-  
գետնաքարշ հոգի ունեցողներուն հա-  
մար դժուարին բան չէ զատուիլ աշ-  
խարհքիս բաներէն . անոր համար կը  
տեսնանք որ կը բաժնէ իր կեանքը պաշ-  
տամանը կարեոր պարտուցը և ջերմե-  
ռանդն խորհրդածութեանց մէջ ՚ի մե-  
նաստանն ծրապայի : Հոն արծարծեց  
իր հանճարը յաղբերս հաւատոց . հոն-  
կից ելաւ 1682ին կղերին անուանի ժո-  
ղովն ուղղելու , որպէս զի աշխարհա-  
կան և հոգեոր իշխանութեանց սահ-  
մաններն որոշէ , որոնք ցայնվայր տար-  
տամ էին . և երբ որ հաստատեց խա-  
ղաղութիւնը Եկեղեցւոյ մէջ , դարձաւ  
իրեն թեմը և միամիտ կուսաններու հա-  
մար գրեց իր Խորհրդանորբիւնը յԱ-  
ւետարանին զիլքը և Համբարձմունիք

՚ի Խորհուրդն (Élévations sur les Mysteres) ըստածը։ Աստուծոյ զրած բոլոր պարտփերը իրեն պաշտօնէից վրայ՝ մտադիւր ընդունեցաւ և անոնցմով կը պարծէր, ու նոյն ձայնը որ խղճկոտ լավալիէսին ապաշխարութիւնը սրբեր և եկեղեցւոյ նախնի հօտապետաց արժանաւոր համարձակախօս լեզուաւ մը լսեցուցեր էր լուգովիկոսի մերկ և անպաճոյն ճշմարտութիւնը, որ կը սիրէր գեղերեսեալ և սնգուրեալ տեսնալ զայն, նոյն ձայնը կը խոնարհէր քրիստոնէական վարդապետութեան հրահանգները սորվեցնելու մանր տղայոց։ Մէկ ձեռքով կ'ազատէր հոգիները աշխարհքիս ալէկոծանքներէն որպէս զի Աստուծոյ գիրեկը գարձնէ, միւսով կը հեռացնէր միրիկներէ զանոնք որ վտանգները չէին ճանչար։

Բաւական չսեպեց կաթուղիկէ Եկեղեցւոյ միութիւնն ապահովցնելը, այլ ամէն բանէ աւելի կը բաղձար զարձնելու 'ի ծոց նորա քրիստոնէից այն մասը որ ուժացեալ էին. յայտնի կ'եպերէր շատերուն բռնաւորական միջոցները, որոնցմով սուր 'ի ձեռին կ'ուզէին քարշել յուղղափառութիւն նոր աղանդներու մէջ մոլորածները. իր զէնքը բերնին խօսքն էր և կ'ուզէր որ ներքին համոզումն ըլլայ առաջնորդ առ Աստուծ գարձին։ Բողոքականաց զէմ հրատարակած բազմաթիւ զրուածոց երեխագոյննէ Պատմութիւն Փոխուխութեալիցը (Histoire des Variations) յորում կը ցուցնէ աստուածաբանական ընդարձակ հմտութիւն մը և անհերքելի փաստաբանութեան մ'ոյժը։ Լայպնիցի հետ ըրած թղթակցութիւնը, զոր ախոյեան հանեցին իրեն զէմ նորազանդ գերմանացիք, օրինակ է միանգամայն լեզուոյ վայելչութեան և պատճառաբանութե ուժոյ, յատկութիւնք որ շատ քիչ կը գտնուին կրօնական կամ քաղաքական պայքարներու մէջ։

Պոսիւէի կեանքը շարունակ պատերազմ եղաւ. որովհետեւ Լայպնիցի հետ վիճելէն ետքը առանց ասոր կամ անոր զիջանելուն, ունեցաւ ուրիշ պատե-

րազմ մը ֆէնլոնի հետ. հոս յաղթութիւնն իրեն եղաւ. բայց մենք մեր առաջարկութենէն դուրս կը համարինք հանգատականութեան (quiétisme) կրօնական խնդիրներուն մէջ մտնալը, և չենք ուզեր ճապաղիլ կիւյօն տիկնոջ վարդապետութեցը վրայ որոնց պաշտպան կեցաւ ֆէնլոն, որովհետեւ մեր վախճանն է զՊոսիւէ միայն իրբե մատենագիր կշռագատել. պերճախօսը կ'ուզենք քննել չէ թէ քահանան։ Մոռնանք ուրեմն իր յաղթութեան տխուր փառքը, յորում թերես քիչ վեհանձն երեցաւ, և փոխադրուինք իր ամպիոնին դիմաց, որուն մէջ իրեն հանճարը եւել եւելօք կը փայլի, ֆէնլոն որ սիրելէն, ներելէն և օրհնելէն զատ ուրիշ բան չգիտցաւ, իրաւամբք կրնայ գանգատիլ հակառակորդին անհամբոյը խստութեր համար։

Ցասուիրեք տարի անցեր էին յորմէ հետէ Պոսիւէ այնչափ մարդիկ լացուցեր էր աշխարելով չենրիկէի Անգլիոյ մահը, երբոր իրեն տրուեցաւնաև լուգովիկոս ԺԴի ամուսնոյն, աւստրիացի Մարիամ թերեսիային դամբանականը խօսիլը։ Այս թագուհիս գրեթէ յանհարձամահ վախճանեցաւ ճամբորդութենէ մը զանապէն ետքը, մինչդեռ թագաւորին հետ զացեր էր յայցելութիւն նոր ստացուած գաւառներուն և բերդերուն, և ինչպէս կ'ըսէ Պոսիւէ « Ընդհարկանել ցաւոցն անդէն և յափշտակեալ, կենդանի և ամբողջ գտաւ 'ի բըռուան մահուն առանց խակ գողցես յակն զայն արկանելց »։ Բարեպաշտ, հլու, ողորմած, կառավարութենէն և շփոթներէ հեռու, կը պահէր իր պերճապայծառ ծննդեան փայլը և կը թողուր որ միայն լուգովիկոս ճոխանայ իր շքեզութեան բովանդակ ճաճանչներովը։ Լուգովիկոս իմանալով որ ամուսինը վախճաներ էր, « Յետ քսանուիրեք տարի թագուհոյն հետ կենակցելուս, ըստու, ասիկայ առաջին վիշտն է որ պատճառեց ինծի »։ Մարիամ թերեսիայի զամբանականը չէր պահանջեր այն վրամեմ և բուռն սլաքըները որ զզրեր էին ամենուն սիրաբ լսելով Անգլիոյ թա-

դուհւոյն գլխէն անցած սոսկալի փորձանքները և իր աղջկանն աւաղելի մահը . բայց կրցաւ ամէնը զարմացնել այն քաղցը և անդորր առաքինութեանց պարզ պատմութեամբն զորոնք կը սիրենք տեսնալ կանանց փափուկ ազգին վրայ , և յետ գծագրելու այն անպահոյն , անմեղ և մաքուր կեանքը , նկարեց Պիրենեանց դաշնադրութեանէն առաջ եղած բանակցութեանց տեսարանը , որ նստուցին զՄարիամ՝ թերեսիա յաթոռն Գալլիոյ : Յանկարծակի մարդկեղէն չքեղութիւնները մահուան ըստուերօք պատելով , առջենիս կը հանէ թագուհւոյն մահուան մահիճը իրեն առագաստի անկողնոյն քով :

Տօնք սրբութեան , ամուսնութիւն երջանիկ . քող հարսանեկան , օրհնութիւն , պատարագ , իցէ թէ տացի ինձ սցոր խառնել զարարողութիւնս և զհանդէսս ձեր ընդ մահազգեաց կացրդիս , և զծագ մեծութեան՝ ընդ աւերակս նորին . . . Ունայնութիւն մարդկօրէն իրաց բազում անգամ ճառեալ յատենի աստ յայսմիկ , առանց իրիք իմոյ ձայնիս նպաստաւորութեան շատ իսկ ինքնին երեխ ՚ի գաւազանն արքունի՝ այսպէս վաղ ընդ փոյթ անկեալ յայնպիսի թագաւորական ձեռաց , և ՚ի բարձրաշուր մեծվայելչութեան անդ՝ այսպէս արագախամուր թառամելոյ:

Այս դամբանականիս մէջ Պոսիւէ անտարակոյս չելլար այն բարձրութիւնը ուր վերացած է Անզիկոյ թագուհւոյն և Հենրիկէի արձանականներուն մէջ , բայց փոխանակ զինքը պարսաւելու , պէտք է գովել իրեն ախորժակը և պատշաճից գիտութիւնը : Թէպէտ և ցամաք ու անբեղուն նիւթ մ'էր , սակայն պերճախօսը շատ մը գեղեցկութեամբք զարդարած է պարզ պատմութիւնը , առանց ճշմարտութիւնը չափազանցութեան տանելու . կ'ընծայեցնէ լուղովիկոսի ամուսինն ինչպէս որ էր , և ինչպէս պէտք էր ըլլար ո՞ր և իցէ իշխանուհի որ ելած ըլլար իրեն աստիճանը : Այս դամբանականս խօսուեցաւ Ա . Դիոնեսիոսի եկեղեցւոյն մէջ 1683ի սեպտեմբերի 1ին :

Երկու տարի ետքը 1685ին գոնզա-

կեան Աննայի դամբանականը կը ցուցնէ թէ որչափ ճկուն և դիւրագարձիկ էր այս հաստատուն և յանդուգն հանճարս ամէն տեսակ նիւթոց իրենց յատուկ բարքը և գոյնը տալու : Զանց կ'ընենք այս ճառիս մանրամասանցն իջնալը , յորում կը գտնուին արժանապէս զարմանալի հատուածներ , ինչպէս օրինակ իմն արքունեաց նկարագիրը և Պարսաւորաց խոռվութեան պատմութիւնը . հոն Պոսիւէ կ'երեկի հետզհետէ ճարտասան , պատմաբան , փիլիսոփայ անանկ բարձր հանճարով մը որ մէկէն կը տեսնուի թէ իրենն է : Պարսաւորաց խոռվութիւնն ասանկ կը ստորագրէ .

Զինչ տեսանեմ՝ ՚ի ժամանակին . որպիսի խոռվութիւն , զինչպիսի ահաւոր տեսիլ առաջի լինի ինձ աստանօր : Միահեծան տէրութիւնս ՚ի հիմանց սասանեալ , պատերազմառնին , արտաքուստ մարտք , հրդեհ ներքոյ և արտաքոյ . . . Էր արդեօք այս ՚ի մրրկաց անտի զորս կարօտի երբեմն երկին թօթափել յանձնէ . . . կամ որպէս թէ երկունք ինչ էին Գալլիոյ՝ մերձ ՚ի ծնանիլ զգարմանազան թագաւորութիւնն լուղուիկեայ :

Բայց պատերազմին փողերը կը հընչեն , երկիր կը հեծէ ՚ի զրնդիւն ոտից երիվարաց , զօրականք զիմեն գունդագունդ , և ահա

՚ի յանզգաստուց ըմբռնեալ և վտարանգեալ և հսկեկն ել երեւեցաւ կարողութիւստաւ , իբրև առիւծ որ զորսն ՚ի ծիրանսն ունիցի՝ կազմ և պատրաստ ՚ի պատառել զայն : Զինչ եղեւ ահաւոր այրուձին արշաւեալ ՚ի թշնամի անդք զօրէն արագութեան արծուոյ . ուր իցեն զոռ մարտիկքն , ուռունքն զինուց հոչակեալք , և աղեղունքն որ ոչ երբէք տեսան ընդ վայր լարեալք . չեն երիվարքն թեթեք , և ոչ արք երագունք , բայց ՚ի փախչել յերեսաց յաղթողին :

Պոսիւէի բոլոր դամբանականներուն մէջ թերեսս պալատինեան իշխանուհւոյնն է որ կը յայտնէ իր հանճարոյն կորովը և բեղնաւորութիւնը . կրօնամէր հոգիներու կու տայ խորհրդածու-

թեան ընդարձակ նիւթեր, և որոնք որ երկմիտ կարծիքներ ունին կրօնից հիմանցը վրայ՝ կ'ամրացընէ և կը հաստատէ զանոնք. միով բանիւ՝ կրնանք լահարբի հետ ըսել որ այս դամբանականս ամենէն աւելի վսեմ քարողն է: Յիշենք նմանապէս այն հատուածը յորում Աննա Գոնզակայի դարձին պատեհաւը Պոսիւէ ամենէն աւելի յաղթահարիչ և զօրաւոր փաստերը մէջ կը բերէ ընդդէմ կրօնից խնդիրներու մէջ անտարբերութիւն ցուցընողներուն.

Գործ մի գործեաց Աստուած՝ ի միջի մերում, որ մեկին զատ յայլ ամենայն պատճառէ և ինքնին ևեթ մնացեալ, լնու զամենայն ժամանակ և գտեղի, և ածէ ընդամենայն երկիր զօրութեամբ բազկի իւրոյ զդրոշմ իշխանութեանն. զՅիսուսէ Քրիստոսէ ասեմ և զեկեղեցւոյ իւրոյ: Յեկեղեցւովս այսմիկ կարգեաց իշխանութիւն՝ միայն բաւական ՚ի նկուն առնել զամբարտաւանութիւն և կանգնել զպարզմութիւն, և միապէս ըմբռն իմաստնոց և տգիտաց՝ երկոցունց զնոյն պատկառանս ակնարկէ: Այսմ իշխանութեան հեստեալ կանստամբակիք արհամարհուտ իմն երեսօք. այլ զի՞նչ տեսին այն չնաշխարհիկ հանճարք, զի՞նչ տեսին առաւել քան զայլս: Քանի ախմարութիւն է ՚ի նոսա, և զիարդդիւրին էր զնոսա ափ ՚ի բերան առնել, եթէ առ անկարութեան և հպարտութեան իւրեանց՝ չերկնչէին յուսմանէ: Միթէ կարծիցեն՝ քաջիկ ևս նշմարել զիսնդրականան, այնու զի ՚ի պարտութիւն մատնին յերեսաց նոցա, և զի տեսեալ այլոց՝ և առ ոչինչ գրեալ են: Զիք ինչ նշմարեալ նոցա, չիմանան և ոչ ինչ, չունին և ոչ որով հաստատիցեն զոչնչութիւնն՝ յոր յուսացեալ ենյետ աստի կենացս, և այն իսկ թշուառական բաժին չէ նոցա հաւաստի: Ոչ գիտեն՝ թէ Աստուծոյ մարդասիրի՞ հանգիպիցեն արգեօք եթէ ոխերմի: Եթէ հանգիտամէտ դնիցեն զնա առ չարութիւն և առ լաւութիւն, որպիսի ուրուական. իսկ եթէ ոչ անարժան համարի դատել զիւր արարածն, զոր և բաւական իսկ արար ընարութեան բարւոյ և չարի, ո՞ ասասցէ ցնոսա՝ զի՞նչ յանուն նորահաճոյիցէ կամ մեղանչական կամ հաշտարար:

Աւստի՞ առին նորա գուշակել թէ որ ինչ և խորհիցի ոք զառաջին լէն չէ ինչ փոյթ և խտիր, և ամենայն կրօնք երեւեալք յերկրի՝ բարի են առաջի նորա: Փանզի են

՚ի նոսա սուտք, նման իցէ ասել՝ թէ չիք և ոչ մի ճշմարիտ, կամ թէ անհնար է ճանաշել զստոյգ բարեկամն վասն չուրջ պաշարելոյ խաբեբայից: Միթէ ամենայն մուրեալք անկեղծիկը իցեն. իցէ ինչ անհնարին մարդոյ անձամբ զանձն խաբել ըստ իւրում սովորութեան: Այլ որո՞ց տանջանաց չիցեն արժանի խոչք և խութք՝ զորս ըստ իւրում մտացն հաճոյից արգել արկանիցէ ընդդէմ վճիտ լուսաւորութեան: Ուր ուսան թէ պատիժ և վարձ մարդկորէն դատաստանաց միայն են, և ոչ գոյ յԱստուած արդարութիւն, որոյ աղօտ իմն կայծակն եեթ է փայլեալն ՚ի մեզ: իսկ եթէ է արդարութիւն տիրական՝ ուստի և անհրաժեշտ, աստուածեղէն՝ վասն որոյ և անսահման, ո՞ պատմեսցէ մեզ թէ չգործիցէ բնաւ ըստ իւրում բնութեանն, և թէ անսահման արդարութիւնն ոչ ՚ի գործ ուրեք արկանիցէ անվախճան և յափտենական տանջանս: իսկ արդ ուր գտանիցին ամբարիչտք, և որ երաշխաւորութիւն կայցէ նոցա յերեսաց վրիժուցն յափտենից՝ որ սպառնացեալ կան նոցա: Առ չգիւտ լաւագոյն ապաստանի՝ երթիցեն արդեօք ընկղմել յանդունդս անաստուածութեան, և յուսասցին հանգիստ ՚ի կատաղութեանէ որ չգտանէ գրեթէ բնաւ իսկ տեղի ՚ի միտս: Ո՞ լուծանիցէ նոցա զտարակուսանսդ, քանզի յայդ անուն կամին նորա կոչել զայնս: Բանն իւրեանց զոր առաջնորդ ունին, ոչ այլ ինչ յանդիման առնէ մտաց նոցա: բայց կարծիս միայն և վարանս. անպատեհութիւնք՝ յորս անկանին ուրանալով՝ ՚ի հաւատոցն առաւել անհեղեղ գտանին քան զնշմարտութիւնս՝ որոց բարձրութիւն շրառւցանէ զնոսա. և առ չկամել հաւատալ անհասխորհոց, զիետ կրթին մի ըստ միոնէ գամ քան զգամ անհասանելի մոլորութեանց:

Պալատինեան իշխանուհոյն դամբանականը խօսելէն հինգ ամիս ետքը, Պոսիւէ երախտագէտ սրտի մտածութքը մը ուղեց նոյն պատիւն ընծայել Միքայէլ Արքէլիէ ատենադպրին յիշատակին, որ պատանեկութեան ատենը կարեւոր ծառայութիւններ մատուցած էր իրեն, ինչպէս նաև իր որդին, Ուէմնի արքեալիսկոպոսը. ասով կրցաւ Պոսիւէ փոխարին մը հատուցանել հօրը և որդւոյն երախտեացը, այնպիսի մարդու մը կենաց պատմիչը և ներբողիչն ըլլա-

լով որ աւելի ծանօթ է Պոսիւէի դամբանականաւը քան թէ իր պաշտօնուվը : Այս գամբանականս զեղեցիկ պատմութիւն մ'է , յորում Պոսիւէ յաճախ Տակիտոսի հետամուտ կ'արձանանանայ . միշտ պարզ , որովհետև միշտ ճշմարիտ է , դիտէ խառնել այս պարզութիւնս նրբագին դիտողութեանց և անանկ խոր ծանօթութեան հետ զոր ունէր ժամանակին մարդոցը վրայ՝ որ մեր զարմանքը կու գայ թէ կենաց մեծագոյն մասը սենեկին մէջ անցընող հայրապետը ինչպէս կրցեր է այնչափ ճիշդ և սուր դատաստաններ ընել պաշտոնէից և պալատականաց վրայ : Այս գամբանականս ընդհանրապէս իրեն արժանաւոր գովինդոց չգտնար , բայց պատճառը նիւթին տեսակն է . այն աստիճանի վարժած ենք տեսնալու զՊոսիւէ որ երկրիս դահերէն և մեծութիւններէն վեր կը բարձրանայ և կը սասանեցնէ զերևակայութիւնը՝ ազգեր և թագաւորներ գրղացնող մեծամեծ ձախորդութեամբք՝ որ զրեթէ անտարբեր կ'ըլլանք այնպիսի կենաց մը պատմութիւնը լսելով որ ուրիշ բան չներկայացներ՝ բայց եթէ իրարու ետևէ յաջորդող երկայն տարիներու կանոնաւոր շարժումը , որոնք կը նմանին իրարու՝ անայլայլակ և միակերպ աշխատութեամբ մը : Բայց յայսմ իսկ էր զիսաւոր դժուարութիւնը , ասանկ դիւրուկ նիւթէ մը , որ շատ քիչ կը յարմարի ճարտասանական ձևերու՝ մեծ արգասիք հանել . և այս բանս միայն Պոսիւէ կրնար ընել : Բարեբազարար լըդէլիէ ատենազդպիրը մասնակից եղած էր անուանի մարդիկներու և դիպուածներու . որով Պոսիւէ կրցած է իմաստուն , խոհական և խաղաղասէր մարդու մը պատմութեամբն՝ ընել այնպիսի ժամանակի մը ճշգրիտ և ստոյգ պատմութիւնը , որ նըշանաւոր էր մեծամեծ շարժմամբք և մեծամեծ փոփոխութեամբք :

Վերջապէս հասաւ ատենը որ վերջին անգամ պիտի լսենք Պոսիւէի ձայնը որ կը հեծեծայ զերեզմաններու վրայ , և զլուկ զործոց մը արտասանելով պիտի

իջնէ դամբանական ամպիոննէն : Փոխադրութինք մոռօք Աստուածածնայ եկեղեցւոյն (Notre-Dame) ընդարձակ ժողովարանը , յորում աշխարհք և եկեղեցի վերջին պարագերնին պիտի հատուցանեն այն մարդուն որ եղաւ Մեծն գոնտէն , և 1686ի զեկտեմբերի 11ին մըտաւ ՚ի յաւիտենականութիւնն ֆոնդէնը պլոյի մէջ : Նկարենք դիմացնիս այն մահուան փառաւոր հանդէսները , այն սգոյ տիրերանգ հանդերձանքն յորս մարդկեղէն մեծութեանց շքեղութիւնը կարծես թէ ուրիշ բանի համար գումարուած չէ բայց եթէ իրենց ոչնչութեանն վկայ ըլլալու : Լեցնենք դարձեալ այն բազմականները , այն աստիճանները , այն կակուղ գահաւորակները լուգովիկոսի արքունեաց հոյակապ զօրավարներովը , համբաւատենչ անուամբքը և բարձրանշան առարինութեամբքը : Ահաւասիկ սա է այն սուրբ որ յաղթեց ՚ի Ռոգուուա , ՚ի Լանս , ՚ի Նորտլինկէն և հիմա դագաղի մը տրխուր պաճուճանքն է և ոչ ինչ այլ . ահաւասիկ այն դաւազանը զոր յաղթութիւնն յափշտակելու անհամբեր ձեռք մը կը նետէր ֆրիպուրի թշնամի գունդերուն մէջ որպէս զի նորէն երթալ առնելու փառքն ունենայ : Աւաղ , այդ գաւազանն անշարժ է , այդ ձեռքը սառուցեալ կարկամեալ , այդ իշխանը զոր կ'արտասուէ Գալլիա՝ զիտապաստ ընկողմանած է դագաղի մը մէջ , միայն օրհասին նշաններովն զարդարեալ . կը ննջէ , բայց իր քունը շատ աւելի խոր է քան զայն որմէ հարկ եղաւ արթընցնել զինքը առաջին պատերազմն սկսելու , առաջին յաղթութիւնն սկսելու համար . ալ ամենայն ինչ վախճանած է աշխարհիս վրայ իրեն համար , ամենայն ինչ բաց ՚ի այն անկորսատական փառքէն որ պիտի իջնէ իրեն ճակատն իբրև պասկ երկնային ծերունուոյ մը ճոռում շրթունքներէն : կը դադրին հոգենուագ երգերը , դաւթեան սխրալի մըրմունջները . կարծես թէ միայն լուսիւնը և աղօթքը կը բնակին այն կամարներուն տակ ուր զիզաղէզ կը խըռ-

նի անթիւ սղազզած բազմութիւն մը : Քահանայ մը կ'ելլէ 'ի բեմն ճշմարտութեան . նա ինքն Պոսիւէն է , ոչ որպէս կ'երևար իր դալար պատանեկութեանը ատեն , արձրկելով ունկնդրացը վրայ ճարտասանութեան շանթիքը . ան ժամանակ « իրեն նայուածքը քաղցր և սուր էր . ձայնը բուռն հոգիէ մը կ'ելլէր . շարժմունքները համեստ , խաղսղ և բնական էին . ամենայն ինչ կը խօսէր իրեն վրայ՝ խօսիլ սկսելէն խակ առաջ » . խակ հիմա մազերը ճերմըկցած են , հասակը խոնարհած դէպ 'ի գերեզման , վիշտերը և տարիները կորնճմըտած են ճակատը և նայուածքը մթընցուցած . ձայնը կորուսած է այն զօրութիւնը որ կարծես թէ սուրի մը պէս կը մտնար ոսկորներուն ծուծը . և եթէ իր կեցուածքէն գեռ կրնանք գուշակել հոգւյն խորհուրդները , ուրիշ բան չենք տեսնար հոն եթէ ոչ խոր ցաւոյ մը ըզգացմունք : Բայց հազիւթէ առաջին խօսքերը շրթունքէն կը վազեն , հին Պոսիւէն ալ աւելի մեծ , փայլակնացայտ , վեհ և վսեմ կերեայ քան ինչ որ եղած է երբէք . լսելու բան է երբ պատերազմ ներու ոգւովը բոնկած կը պատմէ այն Ռոգուուայի յաղթութիւնը որ Լուզովիկոս Ճիխնորածին թագաւորութիւնն ամրացուց . կրնեատուի խառնուրդին մէջ դիւցազին հետ , ջարդուրուրդ կ'ընէ սպանիական հինօրեայ վաշտերը որ կը նմանին աշտարակներու , բայց անսանկ աշտարակներու որ կրնան խրամնին կարել կարկատել . գետին կը տապալէ զանոնք իր խօսքովը , ինչպէս զօրավարը տապալեր էր սրովը . բայց ինչու համար ամբողջ հատուածը մէջ չըերենք , որ ճարտասանական պատմութեան գերագոյն օրինակ է և հազար անգամ ալ կրնայ կարդացուիլ առանց ձանձրութիւն :

Զգիւրն՝ զոր հարկ էր անցուցանել գէմ յանդիման թշնամեացն , իրեւ հսկող զօրավար , հուսկ յետոյ ամենեցուն 'ի քուն եմուտ , այլ ոչ այլ ուրեք առաւել խաղաղ ննջեաց : Յառաջնմէ անտի ցայգոյ աւուրն ահեղի , և յետ առաջնոյ ճակատուն անխոռվ կայ , այնպէս 'ի բնակաւոր իւր

րում պայմանին գտանի . և գիտեմք իսկ զի 'ի վաղիւ անդր 'ի ժամանակեալ ժամանուն զարթուցանել հարկ եղե 'ի խոր քնոյ զերկրորդս զայս Ալեքսանդրոս : Տեսանեք որպէս սլանայ 'ի յաղթութիւն կամ 'ի մահ : Իբրև ընդ կարգս ուազմի ճակատուն տարաւ զեռանդն իւրոյ հոգւոյն՝ անդէն վաղվազակի գոգ 'ի նըմին ժամու , տեսաւ զի վանէր վկանգէր զաջակողմ թեին թշնամեաց , զօրացուցանէր զմերն զսախտեալ , ժողովէր պնդակագմ զգալիացին մերձ 'ի պարտութիւն , փախստեայ տանէր զյաղթական սպանիացին , արկանէր ահ ընդ ամենայն , և փայլակնացայտ աչօքն պակուցանէր զփախուցեալսն 'ի ձեռաց իւրոց :

Մնայր սոսկալի հետեւակազօր սպանիական բանակին , որոյ թանձրախուռոն ստուար գումարտակք , 'ի նմանութիւն աշտարակաց , բայց աշտարակաց՝ որ գիտիցն խրամակարկատ առնել զիսոսս իւրեանց , կային անսասան 'ի միջի անդ ամենեցուն բեկելոցն , և հուր տեղային յամենայն կողմանց : Երիցս գուն գործեաց յաղթող պատանին խորտակել զաներկաւու ուազմիկան , վանեցաւ երիցս 'ի քաջակորով կոմսէն ֆոնթենեան , զոր կառնթաց տեսանէին , և ամենայն տկարութեամբքն հանդերձ յայտ իմն զայն արարեալ , զի ողի պատերազմափորձ՝ տէր է մարմնոյն յոր չնչէ . հարկ է սակայն հուսկ ուրեմն տալ տեղի : Ի զուր ընդ անտառս այրուձիտիվ իւրով նորով՝ ճեպէ տագնապաւ զարշաւան իւր Պէգ՝ գալ անկանել 'ի վերայ զօրուն մերոյ պարտասելոյ . կան խեաց յառաջեաց զնովաւ իշխանն , գունդքըն փլուզեալք պաղատին գթութիւն . բայց սեպէին Անկիենի քան զմարտն ահազին լինելոց է յաղթութիւնն : Իբրև աշալուրջ երեսօք խաղայր զնայր ընդունել զիսոստունն որերոյն այնորիկ քաջի , սոքամիշտ 'ի խեթի զգուշութեան՝ կասկածեալ նոր իմն յեղակարձ յարձակումն , ահազին իմն հրձութեամբ զմերսն 'ի մոլեգնութիւն գարձուցանեն , և այլ ոչ ինչ տեսանի բայց նախճիրք կոտորածի . արեան ճաղպախիք սրարգեցուցանեն զգօրականն , մինչեւ մեծի իշխանին չհանդուրժեալ տեսանել զառիւծունսն զայնոսիկ խողխողեալս իբրև ոչխարս վատասիրտս , ցածոյց զբորբոքեալ սիրտսն , և 'ի հեշտութիւն յաղթութեանն յաւել և զներելոյ թողութեանն :

Զինչ հիացումն կալսւ յայնժամ զհին աւուրց զօրականն և զարիական սպայս նոցին , իբրև տեսին թէ չիք նոցա փրկութեանն :

թիւն բայց միայն՝ ՚ի գիրկո յաղթողին . որով ակամք հայեին յիշխանն պատահի՝ զորոյ զպերճ ճոխութիւնն պանծացուցանէր յաղթահակ, և գեղ նորատեսիլ փայլէր ՚ի նմա գթութիւնն : Ապրեցուցանէր նա մտադիւր և զեեանս քաջի կոմսին ֆոնթենեան . բայց գտաւ նա անկեալ ընդ հազարաւորս վիրաւորաց, զորոց սգայ տակաւին զկորուստն Ապանիա : Զգիտէր նա՛թէ իշխանն որ վատնեաց զնորոտ զայնչափ հինաւուրց գումարտակսն ՚ի կոռուին Ռոգուայ, զմնացեալս սպառելոց էր՝ ՚ի գաշտսն Լանսայ : Այսպէս առաջին յաղթութիւն այլոց բաղմաց եղեւ առհաւատչեայ : Կըրկնեաց ծունր իշխանն, և անդ ՚ի ճակատուն տեղուջ մատոյց Աստուծոյն զօրութեանց զիասսն զոր առաքէր նա առ նա . անդ տօնեցաւ Ռոգուուայի փրկութիւն, և ահագին սպառնալեաց թշնամւոյն՝ գարձ ամօթալից ՚ի գլուխ նորին, հաստատութիւն վարչութեան խնամակալին, հանգիստ Գալիոյ, և այսպիսի յաջող հմայիւք ըսկիզբն արքայութեանն՝ որում հասեալ էր լինել այսչափ հրաշակերտ : Գոհութեանցն սկզբնապար եղեւ բանակն, Գալիիա համօրէն զենի կցեցին, ամբառնային մինչեւ յերկինս զառաջնաճաշակ փորձ հանդիսի սեպհին Անկիենի :

Ո՞ւր սորված է քահանան պատերազմի արուեստը, ինչպէս կրնայ նկարագրել այն սարսափելի ճշմարտութեամբն արիւնալիյ տեսարանները որոնց ականատես եղած չէ : Ունկնդիրները մոռցած են առ ժամանակ ինչ որ դիւցազնն մեռած է . կը տեսնեն զինքը ՚ի գաշտ մարտին, յորում կը ցուցնէ զինքը Պոսիւէ . պիտի տեսնան նաև Շանդիյեայ քաղցը և անդորրաւէտ առանձնութեանը մէջ, յորում պիտի ցուցնէ գարձեալ Պոսիւէ իրեն Աքիլլէսը, պսակեալ նոր փառքով և միշտ մեծ ՚ի հանգստեան և ՚ի գործառնութիւնս .

Իբրէ զի գեղեցիկ է, յետ մարտից պատերազմաց և խազմական զինուցն շառաչմանց՝ գիտել տակաւին առնուլ զհամ խաղաղասէր առսպինութեանց, և զանդորրաւէտ փառաց զոր չբաժանի ոք ոչ ընդ զօրականն և ոչ ընդ բախտն, յորում ամենայն ինչ զուարձացուցանէ և ոչ ինչ շապացուցանէ, յոր գոյ հայել առանց յապուշ միտս միտս եղանակելոց՝ ոչ ՚ի շիփորածայն

բարբառոյ, ոչ ՚ի հրաճայթ թնդիւն ոմրածից անօթոց, ոչ ՚ի մոնչիւն վիրաւորաց, յորում մարդ ինքնին միայն այնպէս վեհերեւի, այնպէս մեծամեծար, որպէս զի թէ հրաման տայցէ, և ընթանայցէ ամենայն բանիւ բերանոյ իւրոյ :

Բայց զոյզն ինչ է պերճաբան ծերունւոյն համար, որուն զօրութիւնը կարծես թէ կ'ամի փոխանակ սպառելու . զոյզն ինչ է Պոսիւէի համար Գոնտէի պէս զիւցազան մը հետ մրցիլը և քահանայական խօսքը բարձրացնել զօրապետին հանճարոյն չափ : Ահաւասիկ ուրիշ զօրավար մը ոչ ինչ պակաս մեծ, ոչ ինչ պակաս ահաւոր, զոր ձեռք կ'առնու իր հանճարէն փախած ապրանք մը . այն ինքն է Դիւրէն : Ձեռք կ'առնու կ'ըսեմ այս երկու փառաց նախանձորդները, և զննելով զիրենք հետ զնետէ այն թափանցիկ նայուածքովն որ աստուածային դրոշմ մ'ունի՝ կ'աղաղակէ .

Տեսան երբէք ուրեք յարս երկուս նոյն առաքինութիւնք ՚ի բարս այնքան այլ և այլս, զի մի ասացից հակառակս : Մին գործել թուի խորախորհուրդ հանճարով, միւսն յանկարծածագ լուսաւորութեամբ . ուստի սա առաւել եռանգնոտ, բայց առանց հրոյն իւրոյ շտապիչ լինելոյ . իսկ նա ցրտագոյն իմն, այլ առանց իրիք տարտամութեան, քան ՚ի խօսել առաւել ՚ի գործելն խիզախ . թէ և տատամսեալ ինչ արտաքոյ, այլ ՚ի ներքոյ պինդ և հաստատուն : Մին ընդ երեելն ՚ի ճամբարա՛ բարձրագոյն իմն տայ կարծիս զիւրմէ քաշութենէն, և նորանշան իմն իրաց տայ ակն ունել, սակայն կարգաւ յառաջ խաղայ, և ոտն ոտն գայ ՚ի նորակերտ ահաւորութիւնսն՝ որ զընթացս կենաց իւրոց վախճանեցին . միւսն իբրև հոգեշունչ ոք՝ անդստին յառաջնմէ ուազմէն հասանէ ՚ի չափ ամենակատար ճարտարապետաց . մին անդուլ և սաստիկ ճգնութեամբ ՚ի հիացումն յափշտակէ զագգ մարդկան, և պապանձեցուցանէ զնախանձ . միւսն անդէն ՚ի սկզբանայնպիսի իմն արձակէ շողիւն փայլակնանշոյլ, մինչեւ չիշխել մախանաց ՚ի վերայ երթալ նորա . մին բարձրութեամբ հանճարոյն և չաւատալի հնարիւք արութեան՝ ամբառնայ գեր ՚ի վերոյ ամենայն վտանգից, և ՚ի գրժանաց իսկ բախտին հանէ իւր օգուտ . միւսն առաւելու-

թեամբ բարձրաշուք զարմին և մեծասրանչ երկնառաք խորհրդովք, և սիրալի իմն բարուք՝ որ անծանօթ մարդկան է գաղտնիք, ծնեալ թուի ձգել ածել զբախտն ըղկետ կամաց սրտի իւրոյ, և ստիպել տագնապել զճակատագիրսն։ Եւ որպէս զի յարսդ երկոսեան տեսցին միշտ նըկարագիրք մեծամեծք, բայց այլ և այլք, մին ՚ի յեղակարծ հարուածոյ խլեալ մեռանի ՚ի վերայ աշխարհին իբրև զջուդա ոմն Մակարեան։ կոծի զնա բանակն որպէս զհայր իւր, արքունիքն և ժողովուրդն ամենայն հեծէ, բարեպաշտութիւն իւր գովի զյոգ ընդ արութեանն, և յիշատակ նորա ոչ խամրի ժամանակաւ։ Միւսն ամբարձեալ զինուք ՚ի ծայրս փառաց հանգոյն Դաւթի, մեռանի ՚ի մահիճս իւր քարոզելով զգովութիւնս Արարչին, և խրատելով զազգատոհմ, և թողու զամենայն սիրտ լի պատարուն փառօք կենացն և քազցրութեամբ մահուն իւրոյ։ Որպիսի տեսիլ, հայել և նկատել զերկոսին արսդ, և ՚ի միտ առնուլ ՚ի միոյ միոյ յայնցանէ զարժանաւոր յարգանս միւսոյն։

Այս գեղեցիկ զուգակշռէս ճարտարախօսը կ'անցնի վերջին վայրկենին նըկարագրութել յորում զիւցազնն կ'անհետանայ և քրիստոնեայն կ'երկի. զոնտէ մահուան անկողնոյն մէջ է, կանչելով չէ թէ մարմոյ այլ հոգւոյ բըժիշկները։ Պոսիւէ կը ներկայացնէ ըզմեղ իր վերջին բարեներուն առ որդին, առ ընտանիս, առ բարեկամն, առ աշխարհ։ Կը կրկնէ մեր ականջը իրեն յետին խօսքերը, և կը կարծենք թէ կ'ըսէ չորս զին պատող իշխաններուն թէ ոչ երբէք կրնան մեծ մարդիկ և մեծ իշխաններ ըլլալ ինչուան որ լաւ մարդիկ չըլլան, հաւատարիմ առ Աստուած և առ թագաւորն։ Մէյմ'ալ Պոսիւէի ձայնը եղանակ մը կ'առնու որ կը մատնէ իր ներքին սաստիկ յուզմունքը։ Կը կոչէ զոնտէի դագաղաց բոլորտիքը զիշխանս և զժողովուրդս, իր փառաց ընկերները և առաքինութեանց վկաները, սկսելով այսպէս այն հրաշալի վերջաբանը որ ամէն զարերու զարմանքը պիտի ընէ և աստուածաշունչ զրոց անմահութիւնն պիտոր ունենայ։

Եկայք, ժողովուրդք, օն եկայք այժ-

միկ . այլ մանաւանդ եկայք իշխանք և տեարք, և որ դատիք զերկիր, և որ զդուրունս երկնից բանայք մարդկանն, և առաւել քան զբնաւու դուք արքայք և տիկնայք, ազնուական շառաւիդք թագաւորաց բազմաց, լուսաւորք Գալլիոյ, այլ այսօր նսեմացեալք և ՚ի թուխս համակեալք ցաւոցդ իբրև մառախլապատք, եկայք տեսէք զդոյզն ինչ որ մնայ մեզ յայնչափ ՚ի մեծաշուկ սերնդենէ, յայնչափ մեծութենէ, յայնչափ փառաց . ակն արկէք շուրջանակի յամենայն կողմանս։ Աւագիկ է զոր կարող գտաւ առնել փառաւորութիւն և բարեպաշտութիւն՝ ՚ի պատիւ գիւցազինն . չքեղ անուանք, արձանագիրք, սնոտի նշանակի այնր՝ որ ոչ ևս է ՚ի միջի պատկերք յարտօսրաթոր կերպարանս շուրջ զշիրմաւ, և անցաւոր օրինակի ցաւոց՝ զոր ամենայնիւ հանդերձ վարէտանի ժամանակ . սիւնք որ մինչեւ յերկինս ամբառանալ թուկն զբարձրանշան վըկայութիւն չքութեան մերոյ . և յամենայն պատիւ յայս՝ չիր ինչ որ ՚ի միջոյ պակաս իցէ, բայց այն ևեթ՝ որում լինին։ Լացէք արդ ՚ի վերայ ողորմ մնացուածոց մարդկեղէն կենաց, ողքս առէք ՚ի վերայ եղուկանմահութեանն զոր ընծայենք գիւցազանց։ Այլ մօտ մատիք մանաւանդ, ով դուք՝ որ հրաբորքոք ընթանայք յասպարիսին փառաց, հոգիք պատերազմականք և ամենիք, ովք արժանագոյն գտաւ հրամանատար ձեզ կալոյ, այլ յում ումեք պարկետագոյն գտէք զհրամանատրութիւն։ Աշխարեցէք ուրեմն զմեծ զօրավարն և ասացէք հեծեծելով։ Աւագիկ որ առաջնորդէրն մեզ ՚ի վտանգս, ընդ սովաւ վարժեալ կրթեցան այնքան անուանի զօրապետք, զորս օրինակի իւր բարձրացուցին յառաջին պատիւ պատերազմի . կարող էր ուրուն իւր տակաւին վանել զմարտս, ևս աւասիկ ՚ի լուսութեան աստիւրում՝ անուննանգմիւրախոյս մեզ հարկանէ, և միանգամայն ազդեցութիւն առնէ մեզ, թէ առ ՚ի գտանելոյ ՚ի մահու զնշմարինչ մնացեալ ՚ի վաստակոցս, և չերթալոյ ամենեին անյոյս ՚ի յաւիտենից յարկս մեր, ընդ երկրաւոր արքային պարտ է պաշտել և զարբայն երկնից Տարայք ուրեմն պաշտօն թագաւորին այնմիկ անմահի, որ լինէ ողորմութեամբ, և զմի ևեթ հեծութիւն անգամ թուեսցէ զձեր և զբաժակ մի ջուր մատուցեալ յանուն իւր, քան թէ այլք ընաւ զարիւն ձեր հեղեալ բովանդակ . և սկիզբն հաշուելոյ զժամանակ պիտանի ծառայութեանցդ՝ առէք յօրէ յորմէ ընձայիցէք զանձինս ձեր Տեառն բարերարի։

Իսկ դուք ոչ գայցէք յայս տխուր մահարձան, դուք ասեմ՝ զորս հաճեցաւ նա հանել՝ ի կարգ բարեկամաց։ Ամենեքին միահամուռ, յոր չափս մտերմութեան իւրոյ և ընկալեալ իցէ զձեզ՝ փարեցարուք զշիրմաւս. Հեղէք արտասուս հանգերձ պաղատանօք, և սիրացեալք ընդիշանին մեծի դիւրահեշտքարեկամութիւն և ընդ անուշակ կենացն հաղորդութիւն, պահեցէք զյիշատակ դիւցազինն որոյ հաւասար էր բարութիւն իւր ընդ սրտին արութեան։ Ու տայր թէ սիրելի ինէին ձեզ միշտ խօսք զնմանէ, ու տայր թէ չահէիք յառաքինութեանց նորա, և մահ նորա զոր արտասուէք լինէր ձեզ ՚ի միիթարութիւն համայն և յօրինակ բարի։

**Յետ իրենցմէ աղօթք և արտասուք խնդրելու, ջանալով բռնել իր թափած արցունիքները և հեկեկանքները խզել, կը յաւելու զողդովուն ձայնիւ.**

Իսկ ինձ, եթէ ներեսցի յետ այլոց ամենեցուն գալ և ինձ հասուցանել զյետին պարտս առ այս գամբարան, ով իշխան, այս արժանաւոր գովութեանց մերոց և ցաւոց, յաւիտեան կեցցես յուշ յիշատակիս. պատկեր քո կենդանի նկարեալ կայցէ անդ, ոչ անվեհեր քաջութեամբ որ զյաղթութիւն աւետէր, ոչ չկամիմ տեսանել ինչ ՚ի քեզ զոր եղծանէ ՚ի նմա մահ. այլ ՚ի պատկերի անդ կերպարանք իցեն քեզ անմահականք, տեսից զքեզ անդ որպիսի էիրն յաւուրն յետնում ընդ ձեռամբն կատուծոյ, յորժամ փառք նորա սկսան իմն երեւել քեզ։ Անդ տեսից զքեզ առաւել յաղթական քան ՚ի Փրիպուրկ և ՚ի Ռոգուուա, և հիացեալ ընդ չքնազ յաղթանակդ՝ ՚ի խոստովանութիւն գոհութեան գոչեցից զգեղեցիկն բարբառ աշակերտին սիրայնոյ։ « Եւ այս է յադրուրինն որ յադրէ աշխարհի. հաւատքն մեր »։ Ճմարիտ յաղթութիւն, որ կոխան դնէ ոտից մերոց զբնաւ աշխարհ՝ հաւատքն մեր են։ Վայելեաւ արդ, իշխանդ, ՚ի յաղթութիւնդ յայդ, վայելեաւ յաւիտեան անմահ գօրութեամբ պատարագիս. հաճեաց ընդ յետին ճիգն ծանօթ քեզ ձայնի<sup>1</sup>. դու վախճան

1 Ս. Գրիգոր Աստուածաբան ալ այսպէս կը լրմացնէ Բարսզի Կեսարացւոյ արձանականը, որ և թարգմանուած է ՚ի նախնեաց. « Այս քեզ ՚ի մէնջ, ով Բասիլիէ, ՚ի հեշտաւոյս քեզ երբեմն ՚ի լեզույ, ՚ի համապատէ և ՚ի հասակակցէ »։ Աւելի առաջ ալ ըսած է. « Եկացք շուրջ կացէք ինձ ամենայն պար. որք միանդամ բեմին էք և որք ՚ի ստորև, որք ՚ի մերոց և որք յարտաքնոց.

առնիցես ամենայն ճառիցս այսոցիկ : Յայս սըմ հետէ՝ փոխանակ զայլոց մահ ողբալոյ, մեծդ իշխան, կամիմ ուսանել՝ ՚ի քէն սուրբ առնել զիմս. երանի թէ ՚ի սպիտակ ալեաց աստի խրատեալ զհամարոյն՝ զոր կայ ինձ տալ ընդ պաշտաման սպասաւորութեանս, պահեցից հօտիս՝ զոր պարտիմ սնուցանել բանիւն կենաց՝ զնըշխարեալ մնացորդս ձայնիս որ նուազի, և զեռանդանս՝ որ շիջանի։

**Ի՞նչպէս կարելի է ստորագրել այս ետքի խօսքերուն արգասիքը, որ մարդուս աղիքը կը գալարեն. Ի՞նչպէս կը նայ այս փափուկ պերճախօսութեանն նշանակները տրուիլ. կարծեմ թէ որ և իցէ զովիեստ պղծութիւն մ'է։ Երանի գոնտէի, ինչպէս Ալեքսանդր երանի տուաւ չոմերոսի դիւցազին, որ յետ կեանքը փառաւորելու անմոռանալի քաջագործութեամբք, նոյն իսկ իրեն մահն անմահացուց այսպիսի ձայնարկու գուստան մ'ունենալով։**

**Պոսիւէ վաթսունեութ տարեկան էր երբ արտասանեց այս ճառս և դեռ ինը տարի ապրեցաւ զրեթէ բոլորովին իրեն հօտին հոգեսոր հրահանգացը միտ դնելով։ Երբոր Աստուած 1704ի ապրիլի 12ին առ ինքն հրաւիրեց զՊոսիւէ որ իր բովանդակ կեանքը նուիրած էր զնա փառաւորելու, այն հզօր ճարտասանը որ իր հանճարոյն յանդգնութերը և բարձրութեամբք ստացեր էր Մօի արծիւ ըսուելու անուանակոչութիւնը, խոնարհ քահանայ մըն էր որ կը զզուէր իր կենաց փառքը և խաչելութիւնը ձեռքը Յիսուսէն ներումն կը խնդրէր զործած մեղքերուն։ Այսպէս մեռաւ երիկամանց քարի հիւանդութեամբ մեծն Պոսիւէ, որ Մասիսէնի ըսածին պէս « ամէն տեսակ հանճարոյ և ամէն տեսսակ գիտութեանց մարդ եղաւ, ամէն եկեղեցիներու վարդապետը, ամէն աղանդոց սոսկումը, եօթնուտասներորդ**

գովութեանս ինձ գործակից լերուք, այլք այլ ինչ ՚ի նորա բարեացն պատմելով և հայցելով։ Որք յաթոռորցն՝ զօրինադիրն, որ ՚ի քաղաքականութենէն զքարեկարգութիւնն », և այն։ Պոսիւէ այս մէկ քանի գարձուածները Աստուածաբանէն փոխ առած կ'երևի, բայց առանց անկե վար մնալու։

դարուն հայրը, և որու ուրիշ բան չպակսեցաւ բայց եթէ նախնի ժամանակները ծնած ըլլալ որպէս զի լուսաւորէ սիւնհոգոսները, գումարեալ Հարց հոգին ըլլայ, կանոններ դնէ և նստի գահերէց՝ ի նիկիս և յԵփեսոս » :

Հիմա որ ճանչցանք զմատենագիրն և իրեն գրուածքը, ճանչնանք և իրեն թարգմանչին յարգը որ ոչ միայն Պոսիւէի լեզուն թափանցած է, այլ և իր հոգւոյն խորը, ու հայկեան դպրութեց օգտակար և շահաւէտ ծառայութիւն մը մատուցած . այս վեց դամբանականներուն հատորը, որ շատ զգերու պէս միայն թղթէ և թանաքէ շինուած չէ, բագրատունի քերթողահօր իրաւունքներէն մէկը պիտի ըլլայ՝ ապագայից զարմանքն և գովութիւնն ընդունելու :

### Հ . Յ . Թ .

---

Ապտ-իշլ-Գատլրի բարոյականը .

Առակներու համար զուրցուած է որ ազգաց իմաստութիւնն են . մենք ալ աս կ'աւելցնենք բսելու որ ազգաց ռամ կական և կենդանի բանաստեղծութիւնն են . հասարակաց մոգին և գործնական դիտողութեան բանաստեղծութիւնն ու ընկերութեան կամ ցեղի մը մտաւոր զարգացումը, իրեն փիլիսոփայութե կամ կրօնից նիւթերու մէջ ունեցած կարծեացը գաղափար մը կու տան : Ա. Յ. սունկատմամբ Գաղղիացի Տօմա (Dau-tas) զօրավարին թարգմանած արաբական խորհրդանշութիւնները կըրկնակի շահամատոց են բարոյական և մատենագրական կողմանէ . սակայն մարդ զանոնք աչքէ անցընելուն ատենը կը տեսնէ որ ամէն լայնութեան ներքեւ, ամէն ժամու ժամանակ ժողովուրդը զը զրեթէ նոյն կերպով կը մտածէ և կը զգայ այն առարկաներուն վրայ որ կը կազմեն մարդկային դիտողութեանց ասպարէզը : Զիր ինչ նոր ընդ արեգակամբ, կամ ինչպէս կ'ըսէ Սողոմոնն

իմաստուն «Ոչ է ամենայն առժամայն ընդ արեգակամբ՝ » . հիմք ամէն տեղ նոյն է . տարբերութիւնը միայն բացաւորութեանը նոր դարձուածքին վրայ է, ըսելու եղանակին գեղեցկութեանը և աշխուժութեանը վրայ : Գիտնալու արժանի և հետաքրքրական բան է թէ ինչպէս Արաբացի մը կը թարգմանէ Եւրոպացւոյ մը, կամ մանաւանդ տիեզերական մարդուն մտածածը և զգացածը, Աստուծոյ, բաղդի, փառասիրութե, սիրոյ և բարեկամութեան վրայ : Ասոր համար մենք ալ զնենք մեր ընթերցողաց աչքին առնե այս խորհրդանշութիւններէն մէկքանին, անապատի վրանին շուգին տակ բացուած իմաստութեան ծաղիկները, որ անշուշտ ունին իրենց տեղական և յատուկ բուրմունքը, թէպէտ գոյները բոլորովին նոր չըլլան :

« Ճ'ակատագիրը, կ'ըսէ Ապտ-իւլ-Գատը, հինգ երկաթեայ մատուըներով ձեռք մ'ունի . երբ որ կ'ուզէ ըզմարդս իրեն կամացը խոնարհեցնել, երկուքը աչքերուն վրայ կը զնէ, երկուքը ականջներուն մէջ, և հինգերորդը բերնին վրայ զնելով կ'ըսէ . Լուռ կեցիր » : — Եմիրը սոյն կերպով կը խորհրդածէ հոգւոյ մեծութե վրայ . « Վեհանձն թշնամիէ մը ազատելու լաւագոյն միջոցն է ներելը . ան ատեն գերի մը կը դառնայ » : — Մեր ցեղին վրայ ալ ասանկ կը մտածէ . « Մարդիկ շինուած են, ոմանք ոսկիէ, ոմանք արծաթէ և մեծ մասը պղնձէ . ամէն մէկը իրեն ճշմարիտ արժէքովն ընդունէ » : — Փառասիրութեան համար ալ կ'ըսէ . « Երբ որ Աստուած կ'ուզէ կորսնցնել զմրջիւնը, իրեն թեսեր կու տայ . լի ուրախութեամբ և գուոզութեամբ կը թռչի . պղտի թռչուն մը կ'անցնի, կը տեսնայ զինքը և կը կըլլէ » .

Սիրոյ, կանանց, բարեկամութեան վրայ արաբական իմաստութիւնը բեղնաւոր է առածներով : Զեռուընիս եկածը կ'առնենք այս գոհարներու տու-